ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳԱԼՋՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալջյան,

Ի պատասխան Ձեր 23.10.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Մաշտոցի պողոտայի և Թումանյան փողոցի խաչմերուկի մոտ գտնվող շենքի վրա առանց թույլտվության տեղադրված գովազդային նյութերն ապամոնտաժվել են:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի աշխատակիցների կողմից տարվում են բանավոր քննարկումներ Մաշտոց պողոտայի և Թումանյան փողոցի հատման խաչմերուկում գտնվող շենքին կից ծածկի փաստացի տիրապետողի հետ՝ ծածկի ապամոնտաժման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ